

ՄԵԼԻՔ ԵԴԱՆԻ ԸՆԴՈՒՆԱՐԱՆԻ ՄՈՒՏՔԻ ՎԻՄԱԳԻՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ՀԱԿՈՐ ՓԱՓԱՋՅԱՆ

Մեծավաստակ վիճադարգետ Սեդրակ Բարխուդարյանի վերծանությունը 1982 թ. հրատարակվեց Դիդակի մեխիբ Իզանի Տող ավանում գտնվող ընդունարանի մուտքի որմին փորագրված ընդարձակ արձանագրության ընդգրկելով: Նույն արձանագրության խիստ աղավաղված ընթերցումն ու սխալ մեկնաբանությունը առաջին անգամ լույս էր տեսել Մ. Բարխուդարյանի «Արցախ աշխատության մեջ, ուր կային նաև մեխիբ Իզանի և նրա որդիների՝ այժմ անհետացած շիրմաների, շարժած տապանագրերի վերծանությունները»:

1960-ական թվականների սկզբներին, երբ Ս. Բարխուդարյանը նոր էր վերադարձել դարաբաղյան գիտական գործուղումից, իր հետ բերել էր միայն արձանապատկան՝ տեղում մատիտով գրված ընթերցումը, քանի որ տեխնիկական դժվարությունների պատճառով հնարավոր չէր եղել, թեև ուղի հատվածաբար, լուսանկարել արձանագրությունը: Ոչ այնքան անվնաս մեղ հասած այս արձանագրության լիակատար ճշգրիտ վերծանությունը դժվարանում է նրանով, որ գրված է կիսագրագետ, բարբառային լեզվով, առանց ուղղագրական որոշակի սկզբունքի և տասերի բազում բացթողումներով:

Քանիցս առիթ ենք ունեցել Ս. Բարխուդարյանի հետ մտորելու ձեռքի տակ եղած գրագրի վրա, սակայն արդյունքը եղել է այն, ինչ որ հրատարակված է «Դիվանի» 5-րդ հատորում:

Այժմ, երբ անցել է շուրջ երկու տասնամյակ, որի ընթացքում նոր ուսումնասիրություններ են կատարվել, հրապարակի վրա է «Հայ ժողովրդի պատմության» բազմահատորյակը և գիտական առավել համակողմանի լուսաբանման են ենթարկված մեխիբ Եզանի անձնավորությանն ու հասարակական-քաղաքական գործունեությանը վերաբերող տվյալները, կարիք է զգացվում վերստին անդրադառնալու այդ արձանագրությանը, փորձելով հասնել առավել համոզիչ վերծանության:

«Դիվանում» արձանագրության գրչագիրը տրված է այն դասավորությամբ, ինչպես որ փորագրված է ընդունարանի մուտքի ճակատին և աշ ու ձախ կողմերի որմերի վրա: Տպագրված վերծանությունն արդեն հուշում է, որ արձանագրությունը սկսված է ճակատի վերին մասից, ապա 15 կարճ սողերով շարունակված է դուռն աջակողմյան քարե նեղ շրջանակի վրա, որին հաջորդում են աջակողմյան որմի վրայի 7 սողերը, այնուհետև մուտքի ձախակողմյան շրջանակի նեղ սյունակի 14 սողերն են, որոնց անմիջական շարունակությունն են կազմում, արձանագրության ավարտը պարունակող, ձախակողմյան որմի 11 սողերը: (Արձանագրության գրչագրի պատկերը, նշված հերթականությամբ տե՛ս հաջորդ էջում):

Ելնելով արձանագրության բովանդակությունից, որտեղ մեխիբ Եզանը, տալով, իր հասարակական-քաղաքական գործունեության նկարագիրը, ավարտում է այն փաստի նշումով, թե նադիրը իրեն Ղարաբաղի վեց մահալների խան և բեկլարբեկի է նշանակել, հաստատապես կարելի է ասել, որ այդ մասին կարող էր գրվել 1735 թ. հետո միայն: Հետևաբար, տեղին է Ս. Բարխուդարյանի տարակուսանքը արձանագրության առաջին սողում իր վերծանած թվականների («Թ[ի] ՌժժԹ—1667») վերաբերյալ: Բանն այն է, որ ամբողջապես զխազրերով փորագրված արձանագրության մեջ որոշ տառեր (շ, շ, զ, ձ) փորագրված են երբեմն մեծատառ, երբեմն էլ փոքրատառ. ինչպես, օրինակ՝ առաջին սյունակի «շԱձ», «շԱՓ», «ԲՆՁ», երկրորդ սյունակի՝ «Թ ձնՌ» «ԴԻՂԱԿ», երրորդ սյունակի՝ «ԲՆՁ», «Թ ձնՌ»: «շԱՓ», «ԲՆՁ» և չորրորդ սյունակի «շԱՌԱՅՊԹ» և «ԲՆՁ» հատվածներում: Պարզ է, ուրեմն, որ թվականի տասնավորը ոչ թե «Թ» է կամ «Մ», ինչպես ենթադրել է Ս. Բարխուդարյանը, այլ փոքրատառ «ձ», որպիսին, ինչպես

1 «Դիվան հայ վիճագրության» (այնուհետև՝ «Դիվան»), պրակ V, Արցախ, կազմեց Ս. Գ. Բարխուդարյան, Երևան, 1982, էջ 180—181:

2 Մ. Բարխուդարյան, Արցախ, Բաքու, 1895, էջ 75—77:

3 «Հայ ժողովրդի պատմություն», հ. IV, Երևան, 1972, էջ 185—186:

տեսանք, մի բանի տեղ հանդիպում է՝ արձանագրության շորս սյունակներում: Եվ իրոք, ՌՃՁԶ (1737) թվականը այն թվականն է, որից երկու տարի առաջ, 1735 թ. աշնանը, Եղվարդի ճակատամարտից հետո, նագիրը մելիք Իզանին նշանակեց Արցախի հայկական մահալների կամ մելիքությունների ընդհանուր կառավարիչ՝ կամ ինչպես արձանագրության մեջ է ասված՝ խան և բեկլարբեկի:

ՌԻՆ ՌՃԶԶ

ՅԻՇ ԱՏԱԿԵՌԱՆԱԴԱՄԱՅԱՍ

ԱՅՍԵՌԵՍՂՈՎԱԶՎԱԳՊՅՊԵՏՈՐԴ

ՈՒԵՄԱՆՈՆԱԿԵՅԻՆԱՌԱՌԱԶԵԳԻՒԷՍՆՉԱՄ

ԴԵՌԻՆՉԱՄԲԵՅԻՆԿՕՒՅՅԻՆՆՈՐԱՅՈՐՕԼՔԱՆ

| | | | | |
|----------|--------------|----------|-----------|--------------|
| ՂԱԼԵԵՌ | | ԻՆՅԴՆ | ԴԻՐԱՌՈՆՉ | ԱՅՍԵՂՍՈՐՈՐԼ |
| ԱՆՂԱԼՍՈ | | ՎԱՎՍՕՍ | ԽՍԱԶԿԻՄ | ԴԵՅ Ո՛ՍԵՎԵՆ |
| ԼՌԱՆՏՈՒԵ | | ՂԱՄԱԶԵՇԱ | ԱՍՇՍԵՎԵՆ | ԱՅՊՈՐԼԵՎԵՆ |
| ՆԻՅՏՆԱ | | ՀՆԱՅԴԻ | ՂԱՆՍԵՎԵՎ | ԱՆԴԱՅՍԵՎԵՆԿ |
| ՅՂԱՏԱՄ | | ԲԶՕՐԵՂ | ՈՂԵՁՄ | ԷՎԵՍՈՂԱՅ |
| ԻՒԷՐԵԲՆ | ԻՅԵՄԱՄԱՅՍՅՆ | ՈԱՔԱՄԵ | -ԴՈՂՅ | ԻՍՆԱՂՄԱՎԱՄԵ |
| ՈՒՏԻՆՆԱ | Ո՛ՆԱՆԱՍՏԱՔՂ | ԿԱԶՕՐՕԳ | ԿԱՅՅՈՒՂ | ԱՆԿԱՎԱՔՅՂԱ |
| ՓՂՈՂՈՂԱՐ | ՈՒՈՂԱԿԵՄՊԻՆՆ | ԱՌԱՍԼՔ | ՈՐԱ | Օ՛ԼՈՅԵՏՈՎԱՄ |
| ԷՄՊԻՐԱԻ | ԴԻՊԱԿ | ԱՍԻՅԵՌԵ | ՈՂԱՅՈՐԻԵՍ | ԻՄՂԱՆՈՐՍԵՐ |
| ԻՆՅՏՈՆՅԵ | | ՍՕՍՄԱՆԼ | ՈՂԵՍՄԱՅ | ԱՅՍՊԵՍԻԱԿՍԵՆ |
| ՍՄԵԼԻՔՈՒ | | ՌԷՆԱՆԱՅ | | ՍԷԵՂԵՍՍԵՆ |
| Ո՛ՂՎԱՎԱՎ | ԵՍՈՐՈՂԵՅ | ՆՈ՛ՍՅԵՍ | | |
| ՅԼՕՈՐԱՍ | ԿԱՅՍՈՐԻՔ | ՂԱՓՂՈՒ | | |
| ՆԼՈՆԵՎԱ | ԵՍԻՊՈՒԼՈ՛Ր | ՈՂԱՐԿԵՄ | | |
| ՎԱՌԱՎ | | | | |

Սելիք Եզանի ընդունարանի մուտքի վիճազիր արձանագրության գրառվածը

Անհրաժեշտ է նշել, որ կիսապրագեա, բարբառային լեզվով շարադրված խոսքում նկատվում են գրություն որոշ օրինակի շեղումներ և հնչյունային հապավումներ, որոնք և օգնում են ճշգրտելու բնագիրը և հասկանալու շարագրանքի իմաստը: Այսպես, նկատվում է, որ հրք նախորդ բառի վերջն ու հատորի սկիզբը նույնահնչյուն են, դրանցից մեկը սղված է: Օրինակ, դռան վեբին մասի արձանագրության 5-րդ տողում «ԴԵՌԻՆ, ԻՆՁ ԿԱՐՔԵՅԻՆ»-ի փոխարեն փորագրված է «ԴԵՌԻՆ ԶԱՐՔԵՅԻՆ» (մեկ ին սղված է) կամ առաջին սյունակի 7-րդ տողում «ՅԻՆՁ ՉԱՓ»-ի փոխարեն փորագրված է «ՅԻՆ ՉԱՓ»: Կան նաև առանձին ձայնավորների սղման և փակագրերի կիրառման փաստեր: Ինչպես, օրինակ, մուտքի վերևի 4-րդ տողում ՄԷՆԻՔ-ի փոխարեն ՄԼՔ, 5-րդ տողում՝ ՔՕԽԱՅ-ի փոխարեն՝ ՔՕԽՅ, առաջին սյունակում՝ ՔՍՍԻՊԷ (փոխանակ՝ ԹԱՄԱՍԻՊԷ) և շորթորդ սյունակում՝ ՔՐՍԴՅՅ (ՔՐԻՍԴՈՆԵՅՅ), ՉԱՐՅՊՔ (ՉԱՐԱՅՊԵՐՔ), ՎԱՐՆԴԱՅ (ՎԱՐԱՆԴԱՅ), ԱՐ (ԱՐԱՐ): Իհարկե, կան նաև տառերի մաշվածության և վնասվածության հետևանքով կատարված սխալ ընդօրինակություններ, ինչպես օրինակ, առաջին սյունակում «ՂԱՍ ՍՈՂԱՆ ՂՈՒՍԷԻՆՅՆ ՏՂԱՅ ՂԱՂՍԻՊ ԷՐԵՔՆ ՈՐ Ի» հատվածը պարզ երևում է, որ պետք է լինի «ՂԱՂ ՍՈՒՐԱՆ ՂՈՒՍԷՅՆ ՏՂԱՅ, ՂԱՂ ԹԱՄԱՍԻՊԷ ԹԱՔԱՌՐԻ»:

Հաջվի առնելով ինչպես վերոհիշյալ, այնպես էլ արձանագրության ընդհանուր ոճին ու լեզվին բնորոշ առանձնահատկությունները և նկատի ունենալով նաև հայ և պարսկալեզու աղբյուրներում ժամանակի իրադարձությունների ու մելիք Եզանի վերաբերյալ եղած ավյանները, կարծում ենք, որ արձանագրության ավելի ճիշտ ընթերցումը հետևյալն է.

Ք[Ի]Ն ՌՃԶԶ (1737), ՅԻՇԱՍԱԿ Ե ԹԱՆԱՊԱՅԱՍ, ԱՅՍ Է, ՈՐ ԵՍ ՂՈՒԿԱԶ ՎԱՐԱՅՊՔԵՏ ՈՐԴԻ, ՈՐ Է ԻՍ ԱՆՈՒՆ Մ[Է]Ղ[Ի]Ք ԵԿԱՆ, ՈՐ ԱՌԱՋԵԻ ԽԷԼԻՆ ՉԱՍ ԴԵՌԻՆ] ԻՆՁ ԿԱՐՔԵՅԻՆ ՔՕԽԱՅ, ՅԻՊ ՆՈՐԱՅ, ՈՐ ՈՂԱՆ ՂԱՍ ԴԵՌԱԿ, ՂԱՂ ՍՈՒՐԱՆ ՂՈՒՍԷՅՆ ՏՂԱՅ՝ ՂԱՂ

4 محمد کاظم, تاریخ عالم آرای نادری, لیننگراد, ۱۹۶۰, ص ۶۳۲

ԹԱՄԱՍՍՈՒՊԷ ԹԱՔԱՆՈՐԻ ՅԻՆ[2] շԱՓ ՂՈՒԼՈՒՂ ԱՐ[Կ]Է, ՈՐ ՊԻՐԱԻ ԻՆՁ ՏՈՒՆՔԷՍ ՄԷԼԻՔՈՒ-
 ԹՈՒՆ ԴՎԱՎ, ԱՅԼ ՕՍՄԱՆԼՈՒՆ ԵԿԱՎ ԱՌԱՎ Ի ԱԵՌ ՆՈՐԱՅՆԻՑՆ, ՈՐ ՍԱՆ ԷԼ ԱՍ ՁԱՓ ՂՈՒԼՈՒՂ
 ԱՐԿԷ, ՈՐ ՊԻՐՆԵ ԴԻՂԱԿ, ԵՍ ԹՈՂԵՑԻ ՈՂ ՀԱՅԱՍԴԱՆԱՍ ԵՍԻՐ ԳԼԵ]ԱԼՈՒԻ. ԻՆՁ ԴՎԱՎ ՍՕՎԼՂ,
 ԱՐԱՂԷ ՇԱՀ ՆԱՅԴԻՐ ՋՐԷՂ ԹԱՔԱՆՈՐ ԵԿԱԻ ՋՐՐՕԲ ԱՌԱԻ ՕԼՔԱՍ Ի ԱԵՌԵՍ ՕՍՄԱՆԼՈՒԷՆԱ-
 ՆԱՏ, ՆՈՐԱՅ ԷՍ շԱՓ ՂՈՒԼՈՒՂ ԱՐԿԷ, ՈՐ ԴՐԱԻ ԻՆՁ ԱՅՍԵՐ Ձ (6) ՄՈՂԻԼԻՍ, ԱԶԿ ՔՐԻՂՅՍ-
 Դ[ՈՆ]Ե[Ա]Յ, ՈՐ ՄԷԿՆ ԹԱԼԻՇ, ՄԷԿՆ շԱՐՑՊ[Ր]Թ, ՄԷԿՆ ԽԱՉԱՆ, ՄԷԿՆ ՎԱՐԱՆԴԱՅ,
 ՄԷԿՆ ՔՈՂԵՑ, ՄԷԿՆ ՏՈՒՂՈՂ, ԱՅ[Ս]ԴՈՒՆՑ ԽԱՆ-Ը ՊԱԿԼԱՊԷԿԱՅ ՏԵՂ ԱՐԱՐ ԻՆՁ. ՇԱ-
 ՓԱՅՂԱԹ ԱՐԱԻ, ՕՎ ՈՐ ՅՆԴՈՎ ԿԱՐԹԷ, ԱՅՍ ԴԻՐԻՍ ԻՄԱՆԱՅ, ՈՐ ՄԵՐ ՈՐՊԷՍՈՒԹՈՐԻ ԱՅՍ-
 ՊԷՍ ԻԼԱԻ, ՄԻՆ ՈՐՈՐՄԵԱ ԱՅՍԷ. ԵՂԵԻ. ԱՄԷՆ.

Ժամանակի խոնարհական լեզվում պարսկա-թուրքական բառերի առկայությունը (քաճա-
 սա = ընդունարան, խելի = ժողովուրդ, շամ դեռի = հավաքվեցին, օլթա = երկիր, զալ = խառնա-
 կույթուն, դուլուզ = ծառայություն, եսիր = գերի, սովլղ = հաշտություն, մեքիլ (մահալ) = պա-
 վատ, խան-ը պակլարպեկի = բեկլարբեկի պաշտոն ունեցող խան, շափաղար = գրություն, շեռոհ) և
 և՛ ղովարացեում էլ լինողը և՛ ընթերցումը, և՛ ճշգրիտ ընկալումը, սակայն դրանով հանդերձ
 դժվար չէ նկատել, որ արձանագրության մեջ ժամանակագրական հաջորդականությամբ նկա-
 րագրված են մինչև 1737 թ. տեղի ունեցած իրադարձությունները, որը արդի հայերենով կկար-
 դացվի այսպես.

«ՈՂՁԳ (1737) թ. Այս ընդունարանը հիշատակ էլ Այսպես է, որ ես Ղուկաս վարդապետի
 որդի, որ իմ անունն է Մեկիք-Եզան, նախապես ժողովուրդը հավաքվեց և ինձ քոխվա (տա-
 նուտեր) կարգեց: Դրանից հետո, երբ երկիրը խառնակության մատնվեց, շահ Սուլթան-Հուսեյնի
 որդի շահ Բահմասպ թագավորին որոշ ծառայություն մատուցեցի, և նա բերեց սրանց [վրա]
 ինձ մեկթուրություն տվեց: Այնուհետև օսմանցին եկավ և [երկիրը] նրա ձեռքից վերցրեց: Սրան
 էլ այս շափ ծառայություն ցույց տվի, որ երբ բերին Դիզակ, ես շքողեցի, որ Հայաստանից գե-
 րի գնան: Արաղից (Կենտրոնական Իրան) շահ Նադիր զորեղ թագավորը իր զորքով եկավ, եր-
 կիրը օսմանուի ձեռքից առավ: Նրան էլ այնքան ծառայություն մատուցեցի, որ նա քրիստոնե-
 յա ազգի Ը մահալներին՝ Քալիշի, Չարաբերդի, Խաչնի, Վարանդաշի, Քոչիզի և Դիզակի վրա,
 ինձ որպես խան և բեկլարբեկի կարգեց. շեռոհ արեց. Ով հետո կարդա, այս գրությունից կի-
 մանա, որ մեր որսիսությունը այսպես է եղել և թող մի ողորմի սախ: Եղավ: Ամենա:

Պետք է ասել, որ դեպքերի այս հակիրճ նկարագրության մեջ կան ուշադրության արժանի
 տվյալներ, որոնք որոշակի հետաքրքրություն են ներկայացնում և կարող են օգնել XVII դ.
 20—30-ական թվականների բուռն իրադարձություններով հարուստ և բախտորոշ ժամանակա-
 շրջանի պատմության առանձին հարցերի լուսարոմանը: Այսպես, օրինակ, պարզվում է, որ
 Դիզակի նոր մելիքական տան հիմնադիր Ղուկաս վարդապետի որդի Եզանի մեկթուրական իրա-
 վունքները նախապես հաստատված են եղել Սեֆյան վերջին շահ Բահմասպ II-ի կողմից: Ամե-
 նայն հավանականությունը, դա տեղի է ունեցել 1724—1725 թթ., երբ վերջինս, աֆղաններից
 հալածված, եկել էր Աղբերալյան և փորձում էր միավորել ընդդիմադիր ուժերը՝ դիմագրավելու
 օսմանյան ներխուժմանը Անդրկովկաս և Ատրպատական: Ուշագրավ է նաև մեկիք Եզանի ոչ
 այնքան պարզ ասած խոսքը օսմանցիների հետ լեզու գտնելու վերաբերյալ, որը նա փաստորեն
 փորձում է արգարացնել այն իրողությամբ, որ նրանցից հաշտություն (սովլղ) կորզելով, կա-
 րողացել է կանխել բնակչության գերիվարումը: Ըստ թողեցի ոչ Հայաստանսս եսիր գնալու, —
 ասված է արձանագրության մեջ:

Կարծում ենք նաև, որ ուշադրության է արժանի արձանագրության այն մասը, որտեղ խոս-
 վում է Նադիրի կողմից մեկիք Եզանին տրված իշխանության և նրա աշխարհազրական սահ-
 մանների մասին: Պարզվում է, որևմն, որ շրջակա բեկլարբեկություններից անկախ, այդ հայ-
 կական ինքնուրույն վարչական միավորման մեջ, հայտնի 5 մահալներից կամ մեկթուրույնե-
 րից բացի, սկզբնապես մտնում էր նաև Քոչիզի կամ Քաշաթաղի մահալը, որտեղ վաղ ժամա-
 նակներից իշխում էին մեկիք Հայկազի սերունդները: Ուշագրավ է հատկապես թխան-ը պակ-
 լարպեկի շարտահայտությունը, որը թույլ է տալիս ասելու, որ մեկիք Եզանը արժանացել է
 «խան» տիրույթի, որով մեծարվում էին նաև Արևելյան Վրաստանի վայրերը (Շահնավազ-
 խան, Իրակլի-խան և այլն) և, որ կարևոր է, նա օժտված է եղել բեկլարբեկներին տրվող
 իրավունքներով, ինչպիսիք էին, օրինակ, Երևանի, Գանձակի, Շիրվանի, Թավրիզի և մյուս բեկ-

՝ «Հայ ժողովրդի պատմություն», հ. V, Երևան, 1974, էջ 172:

լարբեկիները: Դա փաստորեն «Հայոց Արևելից կողմանց» տարածքում հայկական ինքնավար իշխանության ճանաչումն էր, որը ձեռք էր բերված սղնախների ու Ղափանի գինավառ հայության հերոսական պայքարի գնով: Այս իրողությունը հաստատվում է նաև մեկից մեկի գերեզմանաքարի վրայի լավածո տապանագրով:

«Տիրապետեաց սայ ի երկրին
 Ի Աղսւանից ի նահանգին
 Յոյժ պատուեցաւ պարսից աղգին,
 Քան զիշլուսնս Հայոց երկրին...»⁶

Այսպիսով, Անդրկովկասում, Քարթլի-Կախեթի վրացական վալիության կողքին, առաջին անգամ ստեղծվում էր նաև «Մահալ-ն խամսե» անվանվող հայկական առանձին բեկլարբեկություն, որն ընգրկվում էր սլաոմական Արցախն ու մինչև Արաքսի ավեր ձգվող հարակից տարածքները. սակայն, ինչպես գիտենք, այն երկար կյանք չունեցավ: Մեկից մեկի և նրան հաջորդած որդու՝ Արամի մահից հետո (1744 և 1745 թթ.), քառասունական թվականների վերջերին, իրանում վերստին առաջացած անիշխանության և կենտրոնական իշխանության բացակայության շրջանում ներքին ֆեոդալական երկդառակություններից մեկից մեկի միասնությունը բարձրացվեց ու կազմալուծվեց, ենթարկվելով խորհրդավորում ու սաղարաններով Շուշի բերդում հաստատված Ջիվանշիր Փսիահ-խանի հիմնադրած Ղարարաղի խանությանը:

НАДПИСЬ НА ВХОДЕ В ПРИЕМНУЮ МЕЛИКА ЕГАНА

АКОП ПАПАЗЯН

Р е з ю м е

Надпись, сделанная на входе приемной Дизакского мелика Егана и опубликованная С. Бархударяном в 1982 г. в пятом томе «Свода армянских надписей», не могла войти в научный оборот как надежный и достоверный первоисточник. Наличие диалектизмов, орфографических погрешностей и грубых ошибок резчика надписи значительно затрудняют ее расшифровку.

Принимая во внимание особенности стиля и языка надписи, а также данные о мелике Егане, встречающиеся в современных ему армянских и персоязычных источниках, предлагаем новое, исправленное чтение надписи, что, на наш взгляд, может способствовать освещению отдельных вопросов, в частности, событий, имевших место в 20—30-ых гг. XVIII в.

⁶ «Դիվան», պրակ V, էջ 178, հմմտ. Մ. Բարխուդարյանց, Արցախ, էջ 75: